

կորեանց Միաբանութիւնը Ս. Աթոռոյ Գահակալին Յորեկեանին իր մասնակցութիւնը բերելու համար որոշմամբ Տնօրէն ժողովօք Մեծ-Արտի գետնէն բանուկ պողոտայի մը վրայ տրամագրեց գետին մը հանգանակուած վերոյիշեալ գումարով շինելու կառուած մը՝ արդիւնքը իր նպատակին յատկացուելու պայմանաւ շինութեան հոգը ու հսկողութիւնը Յանձնաժողովի մը յանձնուած է և այժմ սկսուած է շէնքը Դուրեանաշէն անունով :

Գալով Մատենադարանի շինութեան՝ անոր հիմնօրհնիք տեղի ունեցաւ 1929 Հոկտ. 26ին, շաբաթ օրը, Թարգմանչաց տօնին, Յորեկեար Սրբազանին նախագահութեամբ. ներկայութեամբ եպիսկոպոսաց, Միաբանութեան և ժողովրդեան: Հիմնարկէքի օրնութիւն չէր աս, այլ չորս անկիւններէն փորուած հիմերուն վերայ օրհնութիւն մը, Մատենադարանի շինութեան ծրագրին գործադրութեան իբր սկսուած: Իուն հիմնարկութիւնը կատարուած է 28 Օգոստոս 1930 հինգշաբթի, Յորեկեար Սրբազանին մահուանէն վերջ: Պատրիարքական Տեղապահ Գեղ. Տ. Մեսրոպ սրբազան կատարած է աւարտած հիմերու վրայ դրուելիք առաջին անկիւնաքարի օրհնութիւնը: Պատշաճ կրօնական արարութեանէ մը վերջ Սրբազանը իր իսկ ձեռքով զետեղած է առաջին անկիւնաքարը, որուն մէջ յետ ընթերցման դրուեցաւ բիւրեղեայ ընդունարանով մագաղաթէ յիշատակարան մը: Նորաչէն Մատենադարանը այժմ գրեթէ աւարտած է. ան շինուած է Տպարանին ու Ժառ. Վարժարանի մէջտեղի պարտէզին մէջ. երկյարկանի հոյակապ շէնք մ'է. դուռը կը բացուի Ժառ. Վարժարան ու Ս. Հրեշտակապետ երթալիք ճանապարհին վրայ. իր մօտը կը գտնուի միաբանաց Պաղէ թաղը և նորաչէն նախակրթարանը. ունի 18 մէթր ճակատ: Շէնքին խորութիւնն է 25 մէթր: Զեղչելով շէնքին ետեի երկու կողմերուն ներս քաշուած մասերը՝ ընդհանուր տարածութիւնն է 418 և կէս մէթր:

Շէնքը ունի երկու յարկեր և վերը թէոսա մը:

Գետնայարկին վրայ մուտքէն վերջ կը գտնուի մեծ ընթերցասրահը 100 քառակուսի մէթր տարածութեամբ:

Ըլլայ գետնայարկը, ըլլայ վերի յարկը՝ երկու կողմերը կ'երկարին գրագարաններու քօրիտօրները, իւրաքանչիւրը 48 քառ. մէթր տարածութեամբ:

Երկրորդ յարկը յաւելուածաբար ունի Մատենադարանի ճա-